# Արձանագրություն h 2

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
28.02.2023թ. կայացած նիստի

Նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 38 անդամներից 31-ը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Գիտական զեկուցում <<ՀՀ ազգային անվտանգության հիմնահարցերի շուրջ>> (զեկուցող՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Լ.Սարգսյան):
2. ԵՊՀ գիտական խորհրդի անդամի առաջադրում:
3. Ընթացիկ հարցեր:

Մինչև նիստի օրակարգային հարցերին անցնելը ֆակուլտետի դեկան, գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Հ.Սարգսյանը դոցենտի կոչման դիպլոմներ հանձնեց Էլյանորա Մաթևոսյանին և Գրիգոր Մնացականյանին:

<<ՀՀ ազգային անվտանգության հիմնահարցերի շուրջ>> զեկուցման շրջանակներում պրոֆեսոր Հ.Սարգսյանը ներկայացրեց ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի մշակման մեթոդաբանությունը, անվտանգային համակարգի առաջնահերթությունները, ինչպես նաև ներկայացրեց ՀՀ ազգային անվտանգության հեռանկարների և կողմնորոշումների վերաբերյալ փորձագիտական հարցման արդյունքների ամփոփումը:

Զեկուցման վերաբերյալ գիտական խորհրդի անդամների հարցերին տրվեցին նաև սպառիչ պատասխաններ:

Օրակարգի 2-րդ հարցը վերաբերվում էր ԵՊՀ գիտական խորհրդում ընտրովի անդամի թեկնածության առաջադրմանը: Այդ առիթով արտահայտվեցին ֆակուլտետի դեկան, պրեֆեսոր Հ.Սարգսյանը, պրոֆեսոր Վ.Բոստանջյանը և դոց. Կ.Խաչատրյանը:

Որոշեցին բաց քվեարկությամբ ԵՊՀ գիտական խորհրդում ընտրովի անդամ առաջադրել ՏԿՖ դեկանի տեղակալ. տնտեսագիտության թեկնածու Գոհար Արայի Բարխուդարյանին: Նրա օգտին, միաձայն գիտական խորհրի անդամները քվեարկեցին <<կողմ>>:

Ընթացիկ հարցերի շրջանակում, հիմք ունենալով <<Կառավարման և գործարարության>> ամբիոնի 27.02.23. թ. կայացած նիստի որոշումը, Սերգո Ռոբերտի

Օգանովի գիտական ղեկավար հաստատեցին տ.գ.թ., դոցենտ Կաղլեն Գագիկի Խաչատրյանին, իսկ ատենախոսության թեմա՝ <<Ինտելեկտուալ կապիտալի առևտրայնացման խնդիրները և զարգացման հեռանկարները (ՀՀ բուհերի օրինակով)>>, Ը.00.02-<<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ:

Գիտխորհրդի նախագահ
տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Լ.Սարգսյան

Գիտխորհրդի քարտուղար
տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Հ.Համբարձումյան